



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՄԻ ՇԱՐՔ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2017

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Վերլուծության հիմքը և հիմնական ուղղությունները .....3
2. Միջազգային իրավական չափանիշները և արտասահմանյան երկրների օրենսդրական փորձը .....6
3. Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումներն ու իրավակիրառ պրակտիկան.....19
4. Եզրահանգումներ և առաջարկություններ.....37

## 1. Վերլուծության հիմքը և հիմնական ուղղությունները

Տեղեկատվության հրապարակային աղբյուրներով, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումներով մի շարք փաստաբաններ հայտնել են մտահոգություններ, որ գործնականում ստեղծվում են իրենց մասնագիտական աշխատանքի խոչընդոտներ՝ կապված քրեակատարողական հիմնարկ կամ դատարան մուտք գործելու և իրենց վստահորդների շահերի պաշտպանությունն իրականացնելու, այդ թվում՝ նրանց իրավաբանական օգնություն ցուցաբերելու հետ: Փաստաբանների մտահոգությունները հիմնականում վերաբերում են նրան, որ քրեակատարողական հիմնարկ կամ դատարան մուտք գործելիս քրեակատարողական ծառայողները կամ դատական կարգադրիչները, չարաշահելով դիրքը, փորձում են իրենց նկատմամբ կատարել անձնական խուզարկություն ենթադրող գործողություններ: Խոսքը վերաբերում է, օրինակ, փաստաբանի մոտ առկա՝ մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ նյութեր պարունակող պայուսակը բացելու կամ իրենց մոտ առկա փաստաթղթերը ծանոթացման ներկայացնելու պահանջներին: Ընդ որում, դատարանների դեպքում դա տեղի է ունենում ցանկացած դատական նիստից առաջ՝ առանց որևէ հիմքի: Արդյունքում, խախտվում են իրենց վստահորդների իրավունքները, քանի որ իրենք հնարավորություն չեն ունենում մուտք գործել համապատասխան հաստատություն: Բացի այդ, փաստաբանների կողմից բարձրացվել է իրենց նկատմամբ խտրական մոտեցում դրսևորելու խնդիրն այն առումով, որ ըստ վերջիններիս՝ դատավարության մյուս մասնակիցները, այդ թվում՝ դատախազները զննության չեն ենթարկվում:

Փաստաբանների բարձրացրած հարցերն, ըստ էության, առնչվում են թե՛ հենց իրենց՝ փաստաբանների, թե՛ իրենց վստահորդների իրավունքների ապահովմանն ու պաշտպանությանը: Ըստ այդմ, դրանք ուղղակիորեն կապված են նշված հաստատություններում փաստաբանի մասնագիտական գործունեության երաշխիքների հետ: Ուստի, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա Պաշտպանի աշխատակազմում իրականացվել է նշված խնդրի համակողմանի իրավական վերլուծություն: Հաշվի առնելով Մարդու իրավունքների պաշտպանին օրենքով

վերապահված իրավական կարգավիճակը՝ սույն իրավական վերլուծության մեջ անդրադարձ չի կատարվել կամ չեն տրվել գնահատականներ, որոնք կարող են առնչվել որևէ դատական վարույթի կամ դատավորների լիազորությունների իրականացմանը:

Վերլուծության ամբողջականությունը և բազմակողմանիությունն ապահովելու, ինչպես նաև գնահատականների ու եզրահանգումների սահմաններն ուրվագծելու նպատակով, այն իրականացվել է հետևյալ իրավաչափ շահերի հաշվառմամբ.

1) փաստաբանի հեղինակությունն ու նրա մասնագիտական աշխատանքի արդյունավետությունը.

2) փաստաբան-վստահորդ արտոնյալ հաղորդակցության և փաստաբանական գաղտնիքի պաշտպանվածությունը.

3) փաստաբանի վստահորդի, այդ թվում՝ պաշտպանյալի իրավաբանական օգնության և մյուս իրավունքների ապահովումը.

4) իրավախախտումների կանխումը, համապատասխան հաստատության անվտանգության ապահովումն ու այլոց իրավունքների պաշտպանությունը:

Վերը շարադրվածի տեսանկյունից էլ ուսումնասիրության են ենթարկվել ոլորտի միջազգային իրավական չափանիշներն ու փորձը, առկա հիմնական իրավական մոտեցումները: Ուսումնասիրության են ենթարկվել նաև ՀՀ օրենսդրությունը և դրա գործնական կիրառության փորձը: Ընդ որում, անդրադարձ է կատարվել թե՛ քրեակատարողական հիմնարկ, թե՛ դատարան մուտք գործելիս մասնագիտական աշխատանք կատարող փաստաբանների նկատմամբ նկարագրված ստուգողական գործողությունների իրավաչափությանը՝ հաշվի առնելով, որ գործնականում այս խնդիրը երկու հաստատության դեպքում էլ բարձրացվել է:

Համապատասխան պարզաբանումներ են պահանջվել ՀՀ արդարադատության նախարարությունից և ՀՀ դատական դեպարտամենտից, որոնք ևս հաշվի են առնվել վերլուծության շրջանակներում: Ուսումնասիրվել և հաշվի են առնվել նաև ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի, ինչպես նաև առանձին փաստաբանների ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դիրքորոշումները նկարագրված հարցերի վերաբերյալ:

Ուսումնասիրության արդյունքներով արվել են եզրահանգումներ և առաջարկություններ, որոնք ներկայացվել են ՀՀ արդարադատության նախարարություն, ինչպես նաև ՀՀ դատարանների նախագահների խորհուրդ ու ՀՀ դատական դեպարտամենտ:

## 2. Միջազգային իրավական չափանիշները և արտասահմանյան երկրների օրենսդրական փորձը

Փաստաբանի գործունեությունն արդարադատության համակարգում ունի առանցքային կարևորություն: Այդ մասնագիտական աշխատանքը ենթակա է հատուկ երաշխավորման:

«Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2000 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ (2000)21 հանձնարարականի 1-ին սկզբունքի 1-ին կետն ամրագրում է, որ պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի հարգվի, պաշտպանվի և խթանվի փաստաբանի մասնագիտական գործունեության ազատությունը՝ առանց խտրականության և իշխանությունների կամ հասարակության կողմից ոչ իրավաչափ միջամտության, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի լույսի ներքո:

Նույն սկզբունքի 4-րդ կետն ամրագրում է, որ փաստաբանները չպետք է ենթարկվեն որևէ պատժամիջոցի, ճնշման կամ դրանց սպառնալիքի, երբ գործում են իրենց մասնագիտական չափանիշներին համապատասխան: Հանձնարարականի 1-ին սկզբունքի 6-րդ կետի համաձայն՝ պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու փաստաբան-վստահորդ հաղորդակցության գաղտնիությունը: Այս կանոնից բացառությունները թույլատրելի են, միայն եթե դրանք համահունչ են իրավունքի գերակայությանը<sup>1</sup>:

Քրեական արդարադատության համակարգում իրավաբանական օգնության հասանելիության վերաբերյալ ՄԱԿ-ի սկզբունքների ու ուղեցույցների 7-րդ սկզբունքն ամրագրում է, որ պետությունները պարտավոր են ապահովել, որպեսզի իրավաբանական օգնություն տրամադրվի քրեական արդարադատության բոլոր փուլերում: Արդյունավետ իրավաբանական օգնությունը ներառում է (սակայն չի սահմանափակվում) ազատությունից զրկված անձանց համար իրավաբանական օգնություն տրամադրողների անարգել մուտք, հաղորդակցության գաղտնիություն,

---

<sup>1</sup> <https://rm.coe.int/16804d0fc8>

հասանելիություն գործի նյութերին և ողջամիտ ժամանակ ու հնարավորություններ՝ կազմակերպելու իրենց պաշտպանությունը<sup>2</sup>:

Այսպիսով, միջազգային չափանիշները կարևոր երաշխիքներ են սահմանում այն առումով, որ փաստաբանը կարողանա իրականացնել իր վստահորդների իրավունքների արդյունավետ պաշտպանություն՝ անկախության և փաստաբանական գաղտնիքի պաշտպանված լինելու պայմաններում: Դրանից բացի, միջազգային չափանիշների, ինչպես նաև շարք երկրների օրենսդրական փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ սահմանված են նաև պետական համապատասխան հաստատություններ, իսկ կոնկրետ դեպքում՝ քրեակատարողական հիմնարկ կամ դատարան փաստաբանի մուտք գործելու հարցին առնչվող կանոններ:

Այսպես, «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2006 թվականի հունվարի 11-ի թիվ (2006)2 հանձնարարականի 54.1-րդ կետի համաձայն՝ պետք է առկա լինեն բանտի աշխատակիցների կողմից այցելուների և նրանց մոտ գտնվող իրերի խուզարկության<sup>3</sup> (search) մանրակրկիտ ընթացակարգեր: Կանոնների 54.10-րդ կետը սահմանում է, որ մասնագիտացված այցերի, օրինակ, իրավական ներկայացուցիչների, սոցիալական աշխատողների և բժիշկների ու այլ մասնագետների այցելությունների հսկողության ընթացակարգերը պետք է քննարկման առարկա դառնան վերջիններիս մասնագիտական մարմինների հետ՝ ապահովելու հավասարակշռություն մի կողմից անվտանգության և ապահովության, իսկ մյուս կողմից՝ մասնագետի հետ խորհրդապահական (confidential) հանդիպման իրավունքի միջև<sup>4</sup>:

Բանտարկյալների հետ վարվեցողության ՄԱԿ-ի Նվազագույն ստանդարտ վերանայված կանոնների (Նելսոն Մանդելայի կանոններ) 60-րդ կանոնն ամրագրում է, որ բանտ այցելողների մուտքը պայմանավորված է խուզարկության

---

<sup>2</sup>[https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/UN\\_principles\\_and\\_guidelines\\_on\\_access\\_to\\_legal\\_aid.pdf](https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/UN_principles_and_guidelines_on_access_to_legal_aid.pdf)

<sup>3</sup> Միջազգային փորձն ու չափանիշներն ուսումնասիրելիս գնություն կամ խուզարկություն եզրոյթներն օգտագործվել են այնպես, ինչպես գործածվում է այդ փաստաթղթերում:

<sup>4</sup> <https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae>

(search) ենթարկվելու վերջիններիս համաձայնությամբ: Այցելողը կարող է ցանկացած ժամանակ հրաժարվել համաձայնելուց, որի դեպքում բանտի վարչակազմը կարող է արգելել վերջինիս մուտքը: Այցելողների մուտքի և խուզարկության գործընթացները չպետք է լինեն նվաստացնող և պետք է իրականացվեն առնվազն 50-րդ և 52-րդ կանոնների երաշխիքների պահպանմամբ:

50-րդ կանոնն իր հերթին ամրագրում է, որ դատապարտյալների կամ նրանց խցերի խուզարկության կարգն ամրագրող օրենսդրությունը պետք է համապատասխանի միջազգային իրավունքով ամրագրված պարտավորություններին և հաշվի առնի միջազգային չափանիշներն ու դրույթները՝ միաժամանակ ապահովելով հիմնարկի անվտանգությունը: Խուզարկությունները պետք է անցկացվեն խուզարկվողի մարդկային արժանապատվությունը և մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը հարգելու սկզբունքով, ինչպես նաև համաչափության, օրինականության և անհրաժեշտության սկզբունքների պահպանմամբ:

Կանոնների 52-րդ կանոնի համաձայն՝ միջամտող (intrusive), այդ թվում՝ ամբողջական մերկացմամբ և մարմնի շոշափմամբ խուզարկությունները, պետք է իրականացվեն միայն բացարձակ անհրաժեշտության դեպքում: Բանտի վարչակազմին խորհուրդ է տրվում խուզարկությունների իրականացման համար մշակել և օգտագործել միջամտող ձևի խուզարկությունների հետ չկապված համապատասխան այլընտրանքային մեթոդներ: Միջամտող խուզարկություններ պետք է անցկացվեն առանձին՝ պատրաստություն անցած, դատապարտյալի հետ նույն սեռի աշխատակիցների կողմից<sup>5</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն՝ հանցագործություն կատարելու մեջ մեղադրվողի պաշտպանության իրավունքը ենթադրում է նաև նրա՝ իր իրավաբանի

---

<sup>5</sup> [https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/GA-RESOLUTION/E\\_ebook.pdf](https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/GA-RESOLUTION/E_ebook.pdf)

հետ խորհրդատվության հնարավորությունը<sup>6</sup>, որն արդար դատաքննության հիմնարար սյուներից է<sup>7</sup>:

Եվրոպական դատարանի վճիռներում ընդգծվում է փաստաբանի մասնագիտության կենտրոնական դերն արդարադատության համակարգում և իրավունքի գերակայության ապահովման գործում: Ինչպես նշել է Եվրոպական դատարանը, առանց անհիմն խոչընդոտների իրենց մասնագիտական գործունեությամբ զբաղվելու փաստաբանների ազատությունը ժողովրդավարական հասարակության էական բաղադրիչ և անհրաժեշտ նախապայման է Կոնվենցիայի պահանջների իրագործման տեսանկյունից<sup>8</sup>:

Եվրոպական դատարանը նաև նշել է, որ փաստաբաններին վերաբերող գործերում փաստաբանի մասնագիտական գաղտնիքի նկատմամբ ոտնձգությունը կարող է հետևանք ունենալ արդարադատության համակարգի համար և այդպիսով խախտել Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը<sup>9</sup>: Ընդ որում, փաստաբանի հետ հաղորդակցությունը պաշտպանված է նաև Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում:

Ըստ Եվրոպական դատարանի՝ մեղադրյալի նկատմամբ կիրառվող յուրաքանչյուր սահմանափակում, ներառյալ նրա հաղորդակցությունը փաստաբանի հետ, պետք է ունենա օրինական հիմք, և օրենքը պետք է լինի բավականաչափ որոշակի<sup>10</sup>:

Ընդհանրապես, Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ ցանկացած միջամտություն՝ անկախ նրանից, թե ներպետական օրենսդրությամբ ինչ ընթացակարգի շրջանակներում է

---

<sup>6</sup> Քամփբելը և Ֆելլն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Campbell and Fell v. the United Kingdom*) գործով Եվրոպական դատարանի վճիռը, գանգատներ թիվ 7819/77 7878/77, կետ 99, Գոդդին ընդդեմ Իտալիայի (*Goddi v. Italy*) գործով Եվրոպական դատարանի վճիռը, գանգատ թիվ 8966/80, կետ 31:

<sup>7</sup> Սալդուզն ընդդեմ Թուրքիայի (*Salduz v. Turkey [GC]*) գործով Եվրոպական դատարանի վճիռը, գանգատ թիվ 36391/02, կետ 51:

<sup>8</sup> Էլչին ու ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (*Elçi and others v. Turkey*) գործով Եվրոպական դատարանի վճիռը, գանգատներ թիվ 23145/93 և 25091/94, կետ 669:

<sup>9</sup> Նիմիցն ընդդեմ Գերմանիայի (*Niemietz v. Germany*) գործով Եվրոպական դատարանի վճիռը, գանգատ թիվ 13710/88, կետ 37, Սմիրնովն ընդդեմ Ռուսաստանի (*Smirnov v. Russia*) գործով Եվրոպական դատարանի վճիռը, գանգատ թիվ 71362/01, կետ 48:

<sup>10</sup> Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի (*Khodorkovskiy v. Russia*) գործով Եվրոպական դատարանի վճիռը, գանգատ թիվ 5829/04, կետ 200, *mutatis mutandis*, Նոլանն ու Կ.-ն ընդդեմ Ռուսաստանի վճիռը, գանգատ թիվ 2512/04, կետեր 98-99:

իրականացվում, իրավաչափ կարող է համարվել, միայն եթե պահպանված են այդպիսի միջամտության օրինականությունն ու համաչափությունը:

Այլ կերպ՝ հարցի կապակցությամբ Եվրոպական դատարանի եզրահանգումներից կարելի է արձանագրել, որ փաստաբանի գնության կամ խուզարկության իրավաչափության հարցը թերևս պետք է կանխորոշվի ոչ այնքան իշխանության ներկայացուցչի գործողությունների՝ այս կամ այն ձևական ընթացակարգի շրջանակներում կամ դրանցից դուրս իրականացմամբ, որքան այդ գործողության կամ պահանջի՝ իրավունքի նկատմամբ միջամտության բնույթով և աստիճանով:

Հատկանշական է, որ, օրինակ, քրեակատարողական հիմնարկի դեպքում խուզարկության առնչությամբ փաստաբանի հետ հաղորդակցության գաղտնիությանը միջամտության իրավաչափությունը գնահատելիս Եվրոպական դատարանը շեշտադրել է, որ բանտի վարչակազմը պետք է ունենա «**հիմնավոր պատճառ**» այդ հաղորդակցության **անօրինականության վերաբերյալ, որը հնարավոր չի եղել բացահայտել հայտնաբերման սովորական միջոցներով (normal means of detection): «Հիմնավոր պատճառի» առկայությունն իր հերթին կախված է գործի բոլոր հանգամանքներից, որոնք իրենց հերթին ենթադրում են փաստերի կամ տեղեկության առկայություն, որն օբյեկտիվ դիտորդին կհամոզեր, որ հաղորդակցության արտոնյալ միջոցը չարաշահվել է: Եվրոպական դատարանն արձանագրել է նաև, որ փաստաբանի հետ հաղորդակցությանն առավել խիստ միջամտությունը, մասնավորապես՝ նամակագրության բովանդակությանը ծանոթանալը թույլատրելի է միայն բացառիկ դեպքերում և կարող է արդարացվել միայն հիմնավոր պատճառով (reasonable cause) առ այն, որ այդ արտոնությունը չարաշահվում է, և հաղորդակցության բովանդակությունը սպառնում է հիմնարկի կամ այլոց անվտանգությանը կամ իր բնույթով քրեորեն պատժելի է<sup>11</sup>:**

Փաստաբանական գաղտնիքի կարևորությունը քննարկելիս Եվրոպական դատարանը նշել է, որ դրան անհամաչափ միջամտությունը կարող է ազդեցություն ունենալ արդարադատության պատշաճ իրականացման և Կոնվենցիայի 6-րդ

---

<sup>11</sup> Տե՛ս, օրինակ, Բորիս Պոպովն ընդդեմ Ռուսաստանի (Boris Popov v. Russia) գործով Եվրոպական դատարանի վճիռը, գանգատ թիվ 23284/04, կետ 111, Պետրովն ընդդեմ Բուլղարիայի (Petrov v. Bulgaria) գործով Եվրոպական դատարանի վճիռը, գանգատ թիվ 15197/02, կետ 43:

հողվածով երաշխավորված իրավունքների վրա: **Դա կարող է բացասաբար ազդել փաստաբանի մասնագիտական հեղինակության վրա՝ ինչպես իր վստահորդների, այնպես էլ ողջ հասարակության շրջանում**<sup>12</sup>:

Ուստի, անթույլատրելի է փաստաբանի նկատմամբ այնպիսի ստուգողական գործողությունը կամ դա այնպիսի եղանակով կատարելը, որը կարող է վտանգել փաստաբանական գաղտնիքը:

Անթույլատրելի է նաև փաստաբան-վստահորդ գաղտնի հաղորդակցության, այդ թվում՝ անձի պաշտպանությունն իրականացնելու հետ կապված ցանկացած տեղեկության նկատմամբ հսկողություն, որը կարող է վտանգել նման միջամտության իրավաչափ նպատակով չպայմանավորված այլ տեղեկությունների գաղտնիությունը:

Վերոգրյալի հետ միասին, Եվրոպական դատարանը որոշակի չափանիշներ է արտահայտել, օրինակ, դատարանում անվտանգության միջոցառումների իրականացման առնչությամբ՝ կապված այդ միջոցառումների կարևորության ու արդար դատաքննության երաշխիքների հարաբերակցության հետ: Մասնավորապես, ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանում անվտանգության միջոցառումների կիրառումը պետք է ստանա նեղ մեկնաբանություն և համապատասխանի անհրաժեշտության սկզբունքին: Այն չպետք է խախտի արդար դատաքննության երաշխիքները և վերջիններիս համեմատությամբ պետք է արժանանա պատշաճ հավասարակշռման: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատական մարմինները պետք է հանգամանորեն քննարկեն դատարանի դահլիճում ապահովության և անվտանգության բոլոր հնարավոր այլընտրանքները և նախապատվությունը տան ավելի նվազ աստիճանի խիստ միջոցի, եթե դրանով հնարավոր է հասնել նույն նպատակին: Այս չափանիշներն արտահայտված են *Կրեստովսկին ընդդեմ Ռուսաստանի* գործով վճռում: Նույն վճռում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ գործը քննող դատարանի կողմից նշված ջանքերը չեն գործադրվել: Այն չի պարզաբանել՝ ինչու անվտանգության ձեռնարկված միջոցները, օրինակ, մետաղաորսիչ սարքերով մարդկանց ստուգելը չի եղել բավարար կոնկրետ գործով: Ներպետական դատարանը նաև չի պարզել՝ ինչու էր

<sup>12</sup> Նիմիցն ընդդեմ Գերմանիայի (Niemietz v. Germany) գործով Եվրոպական դատարանի վճիռը, գանգատ թիվ 13710/88, կետ 37:

պետական անվտանգության համակարգի տեսանկյունից դա անբավարար, որ դատարանը պետք է անցկացնէր փակ դատական քննություն<sup>13</sup>: *Ռիեպանը ընդդէմ Ավստրիայի* գործով վճռում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ անվտանգության խնդիրները շատ քրեական վարույթների բնորոշ հատկանիշ են: Դրա հետ մեկտեղ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ չնայած անվտանգությանը վերաբերող մտահոգություններին, կոնկրետ գործով ավստրիական դատարանը դրանք լուրջ քննարկման չի արժանացրել, որոնք էլ անհրաժեշտ կդարձնէին դատարանի կողմից որոշման կայացումը<sup>14</sup>:

Այսինքն՝ Եվրոպական դատարանն ընդունում է, որ ներպետական դատարանում, կապված քննվող գործի կամ, ասենք, այլոց պաշտպանության հետ, կարող է առաջ գալ անվտանգության ապահովման հարց: Ընդ որում, անվտանգության ապահովման պահանջը կապվում է նաև պատշաճ դատական քննություն անցկացնելու հետ: Սրանով հանդերձ, անվտանգության միջոցառումները ինքնանպատակ գործադրվել չեն կարող: Դրանք պետք է լինեն հիմնավորված և համապատասխանեն անհրաժեշտության չափանիշին: Հակառակ դեպքում կարող է առաջ գալ արդար դատաքննության պահանջների խախտման հարց: Այս առումով, այն որ ինքնին բավարար չէ առանց պաճառաբանության անվտանգությանն ընդհանուր բնույթի հղումներ անելը, Եվրոպական դատարանն արձանագրել է նաև *Աշոտ Հարությունյան ընդդէմ Հայաստանի* գործով վճռում<sup>15</sup>:

Սույն վերլուծության շրջանակներում ուսումնասիրվել է նաև արտասահմանյան երկրների օրենսդրական փորձը:

Այսպես, Ավստրիայում բանտի ծառայողները կարող են խուզարկել (search) այցելուներին, երբ նրանք մուտք են գործում քրեակատարողական հիմնարկ, եթե առկա է հիմնավոր կասկած, որ նրանք մտադրվել են ապօրինի կերպով հաղորդակցվելու ազատագրկվածի հետ կամ փոխանցելու նրան գումար կամ նրանք ունեն որևէ առարկա, որը կարող է վտանգել բանտի անվտանգությունը և

---

<sup>13</sup> Կրեստովսկին ընդդէմ Ռուսաստանի (Krestovsky v. Russia) գործով Եվրոպական դատարանի վճիռը, գանգատ թիվ 14040/03, կետ 29:

<sup>14</sup> Ռիեպանը ընդդէմ Ավստրիայի (Riepan v. Austria) գործով Եվրոպական դատարանի վճիռը, գանգատ թիվ 35115/97, կետ 34:

<sup>15</sup> Աշոտ Հարությունյանն ընդդէմ Հայաստանի (Ashot Harutyunyan v. Armenia) գործով Եվրոպական դատարանի վճիռը, գանգատ թիվ 34334/04, կետ 126:

կարգը: Իրավաբանների կողմից իրենց վստահորդի հետ հանդիպման համար քրեակատարողական հիմնարկ բերվող փաստաթղթերի բովանդակային զննությունը (examination) թույլատրելի է միայն, եթե առկա է հիմնավոր պատճառ կասկածելու, որ փաստաթղթի բովանդակությունը կարող է սպառնալ բանտի անվտանգությանը կամ դրա բովանդակությունն իրենից կարող է ներկայացնել քրեական հանցագործություն կամ ծառայել որպես նման արարքի նախապատրաստություն<sup>16</sup>:

Պորտուգալիայում քրեակատարողական հիմնարկի այցելուների ստուգումն իրականացվում է մետաղ որոնող սարքով, հագուստի շոշափումով, վարսերի շոշափումով և բերանի խոռոչի ստուգմամբ, կոշիկների և գոտու արձակմամբ, անձնական պայուսակի կամ նմանատիպ իրերի պարունակության ստուգմամբ<sup>17</sup>: Այցելության բերված բոլոր իրերը ենթարկվում են ռենտգենային ճառագայթման սարքով ստուգման, իսկ հագուստի հեռացմամբ խուզարկությունն արգելվում է:

Պորտուգալիայում փաստաբանները կարող են զննության ենթարկվել մետաղ որոնող սարքի միջոցով, և եթե արդյունքը դրական է, ապա փաստաբանին հնարավորություն է տրվում ներկայացնելու պատճառներն ու հեռացնելու ազդանշանի համար հիմք հանդիսացած առարկաները՝ առանց անձնական կամ որևէ այլ զննության: Թղթապանակի պարունակությունը ստուգվում է հնարավորության դեպքում ռենտգենային ճառագայթման սարքի միջոցով կամ տեսողական ստուգմամբ, որը յուրաքանչյուր դեպքում բացառում է այդ փաստաթղթերի բովանդակային ստուգումը: Ընդ որում, փաստաբանները կարող են բանտ մուտք գործել անձնական համակարգչով կամ բջջային հեռախոսով և օգտագործել դրանք այցի ընթացքում<sup>18</sup>:

Ֆրանսիայում կալանավորվածների և նրանց այցելող անձանց իրավունքների և պարտականությունների ուղեցույցի համաձայն՝ կարելի է խուզարկել բանտ այցելած անձին<sup>19</sup>: Իրականացվում է մետաղ որոնող սարքերով խուզարկություն, որը

---

<sup>16</sup> Ավստրիայի «Քրեակատարողական համակարգի մասին» օրենք, մաս 96, կետ 2:

<sup>17</sup> «Քրեակատարողական հիմնարկի ընդհանուր կանոններ» որոշման (Ռոնշում-օրենք 51/2011, Ապրիլի 11) 115-րդ հոդված

<sup>18</sup> «Քրեակատարողական հիմնարկի ընդհանուր կանոններ» որոշման 104-րդ հոդվածի (Ռոնշում-օրենք 51/2011, Ապրիլի 11):

<sup>19</sup> [http://www.justice.gouv.fr/art\\_pix/Guide\\_Je\\_suis\\_en\\_detention\\_V7\\_FINAL\\_opt.pdf](http://www.justice.gouv.fr/art_pix/Guide_Je_suis_en_detention_V7_FINAL_opt.pdf)

հնարավորություն է տալիս անձնակազմին հայտնաբերել արգելված և վնասակար իրեր: Փաստաբաններն ազատորեն չեն կարող ցանկացած իր ներս տանել բանտ: Փախուստի վախը կամ ներքին անհանգստությունները հանգեցրել են նրան, որ Ֆրանսիայում ընդունվել է հատուկ կանոնակարգ, որը նպատակ ունի մի կողմից՝ ապահովելու փաստաբանի մասնագիտական գաղտնիքի պաշտպանվածությունը, մյուս կողմից՝ բանտի բնականոն գործունեությունը: Փաստաբաններն անցնում են մետաղաորսիչ սարքի տակով: Երբ մետաղաորսիչ սարքն ազդանշան է տալիս, փաստաբանին է հնարավորություն տրվում որոշելու՝ ինչ քայլեր ձեռնարկել, որպեսզի կարողանա մուտք գործել բանտ<sup>20</sup>:

Կանադայի օրենսդրությունն, օրինակ, տարանջատում է բանտ մուտք գործող անձանց համար պարբերական չմիջամտող խուզարկության (non-intrusive search) ընթացակարգը, որը ենթադրում է, որ բանտ վարչակազմը կարող է այցելուներին խուզարկել առանց հստակ կասկած ունենալու կամ անհատականացնելու<sup>21</sup>: Այդ երկրի օրենսդրությամբ ամրագրվում է, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը կարող է կատարել տեխնիկական միջոցներով կամ ձեռքով մարմնի կամ հագուստի խուզարկություն (frisk search) այն դեպքում, երբ կասկած կա, որ անձն իր մոտ ունի արգելված առարկաներ<sup>22</sup>: Այն պարագայում, երբ բանտի վարչակազմն ունի ողջամիտ հիմքեր կասկածելու, որ անձն իր մոտ ունի օրենքով արգելված իրեր և հագուստի հեռացումով խուզարկությունն անհրաժեշտ է ապացույցներ գտնելու համար, այցելուին առաջարկվում է ինքնակամ հեռանալ բանտից, ինչը չկատարելու դեպքում իրականացվում է հագուստի հեռացմամբ (մերկացմամբ) խուզարկություն (strip search)՝ նույն սեռի ներկայացուցչի կողմից<sup>23</sup>: Հատկանշական է, որ Կանադայում ընդունվել են ուղեցույցներ բանտերում տարբեր աստիճանի խուզարկությունների (search) իրականացման վերաբերյալ: Ընդ որում, այդ ուղեցույցները պարտադիր ներկայացվում են ծանոթացման հիմնարկ այցելողներին: Մյուս կողմից՝ դրանք ծառայում են իբրև ուղենիշ այսպիսի

---

<sup>20</sup><http://prison.eu.org/spip.php?article395>

[w.slp.wa.gov.au/pco/prod/FileStore.nsf/Documents/MRDocument:29788P/\\$FILE/Prisons%20Act%201981%20-%20\[08-f0-01\].pdf?OpenElement](http://w.slp.wa.gov.au/pco/prod/FileStore.nsf/Documents/MRDocument:29788P/$FILE/Prisons%20Act%201981%20-%20[08-f0-01].pdf?OpenElement):

<http://laws-lois.justice.gc.ca/eng/acts/C-44.6/page-8.html#h-23>, <http://laws-lois.justice.gc.ca/PDF/C-44.6.pdf>

<sup>22</sup>Տե՛ս նույն տեղում՝ 60-րդ մաս:

<sup>23</sup>Տե՛ս նույն տեղում՝ 61-րդ մաս:

ստուգողական գործողությունն իրականացնող անձնակազմի համար՝ ամրագրելով արգելված իրերի ցանկը, խուզարկության յուրաքանչյուր տեսակի դեպքում իրականացվող գործողությունների շրջանակն ու տեխնիկական միջոցների կիրառման կարգը<sup>24</sup>:

Մեծ Բրիտանիայում բանտ մուտք կամ ելք գործող ցանկացած անձ կամ տրանսպորտային միջոց ևս կարող է կանգնեցվել, խուզարկվել (searched) և զննվել (examined)<sup>25</sup>: Այդ գործընթացում կիրառվում է մետաղորոնիչ սարք ու հաստուկ միջոցներ<sup>26</sup>:

Շվեդիայի օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անվտանգության նկատառումներից ելնելով՝ բանտ այցելությունը կարող է պայմանավորվել այցելուի մարմնական խուզարկությամբ (body search) կամ մակերեսային մարմնական ստուգմամբ (superficial body inspection)<sup>27</sup>: Բանտերում անվտանգության ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ քրեակատարողական հիմնարկի և պրոբացիոն համակարգի վարչակազմի որոշմամբ այդ վայրեր մուտք գործող անձինք կարող են ենթարկվել մարմնական խուզարկության՝ մուտքի ընդհանուր հսկողություն<sup>28</sup>:

Հետաքրքրական է Ամերիկայի Միացյալ Նահանգների փորձը դատարան մուտքին վերաբերող կարգավորումների առնչությամբ: Նախ, ԱՄՆ-ում դատարան մուտք գործող անձանց նկատմամբ իրականացվող ստուգողական գործողություններն իրականացվում են դատարանի անվտանգության (security) ապահովմանն ուղղված միջոցառումների շրջանակում: Դրանից բացի, փաստաբանների համար սահմանված են անվտանգության կանոնների կիրառության հաստուկ կարգավորումներ, որոնք նույնպես բխում են անվտանգության ապահովման խնդիրից:

Այսպես, Նյու Յորքի հարավային շրջանի դատարան մուտք գործելու համար բոլոր անձինք ենթարկվում են ստուգման ընդհանուր կարգով: Փաստաբանը

<sup>24</sup> [http://www.csc-scc.gc.ca/politiques-et-lois/566-8-1-gl-eng.shtml#ANNEX\\_E](http://www.csc-scc.gc.ca/politiques-et-lois/566-8-1-gl-eng.shtml#ANNEX_E)

<sup>25</sup> 1999 թվականին ընդունված Մեծ Բրիտանիայի Բանտային կանոններ (The Prison Rules 1999), 71-րդ մաս:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>27</sup> [https://www.kriminalvarden.se/globalassets/om\\_oss/lagar/fangelselagen-engelska.pdf](https://www.kriminalvarden.se/globalassets/om_oss/lagar/fangelselagen-engelska.pdf),

Կալանավորման մասին օրենք, մաս 3, բաժին 3; Ազատագրկման մասին օրենք, մաս 7, բաժին 3:

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղում՝ մաս 11:

նույնպես ենթարկվում է ստուգման, սակայն նրա համար գործում են հատուկ կանոններ: Մասնավորապես, փաստաբանը պետք է իր հետ ունենա դատարան մուտք գործելու հատուկ անցագիր: Անցագիրը լրացվում է սահմանված ձևաթղթի պահանջներին համապատասխան, որը անձնական և այլ տվյալներից բացի ներառում է նաև անվտանգության հատուկ կանոններ և փաստաբանի պարտավորվածությունը հետևելու այդ կանոններին: Օրինակ՝ փաստաբանն իրավունք չունի համակարգիչ ներս տանել դատարան, և անցագիրը չի տալիս նման հնարավորություն: Դա կարող է տեղի ունենալ բացառապես կոնկրետ գործը քննող դատավորի թույլտվությամբ: Փաստաբանին հնարավորություն է տրվում հանրության համար նախատեսված անվտանգության միջոցառումներից առանձին, ավելի հեշտացված գործընթաց անցնել<sup>29</sup>: Նույնաբնույթ կանոններ են գործում նաև Նյու Յորքի Սնանկության հարցերով, ինչպես նաև նահանգային դատարաններ մուտքի համար<sup>30</sup>:

Իլինոյս նահանգում փաստաբանի համար նախատեսված է դատարան մուտք գործելու անվտանգության առանձին ընթացակարգ, որը տարբերվում է անվտանգության հանրային ընթացակարգից (public security line): Ընդ որում, հատուկ սահմանված են այն առարկաները, որոնց դատարան տանելը դատարանի անվտանգությունն ապահովող ծառայությունը կարող է փաստաբաններին արգելել (օրինակ՝ ցանկացած տեսակի բջջային հեռախոս)<sup>31</sup>:

Խնդրին 2010 թվականին անդրադարձել է նաև Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանը, որի որոշման համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված անձի՝ իր փաստաբանի (պաշտպանի) հետ կոնֆիդենցիալ (խորհրդապահական) բնույթի հարաբերություններ ունենալու իրավունքը՝ որպես որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի անքակտելի մաս, բացարձակ չէ: Սակայն դրա սահմանափակումները՝ կապված փաստաբանական գաղտնիքից շեղումների հետ, համաձայն ՌԴ Սահմանադրական դատարանի մի

<sup>29</sup> <http://www.nysd.uscourts.gov/file/forms/attorney-service-pass-application>:

<sup>30</sup> <http://www.nysb.uscourts.gov/security-poughkeepsie>,  
<http://www.nysb.uscourts.gov/sites/default/files/m396.pdf>,  
<http://www.nysb.uscourts.gov/sites/default/files/rules.pdf>:  
<https://www.nycourts.gov/attorneys/registration/securepass.shtml>,  
<http://www.eriebar.org/MemberCenter/PublicationsResources/SecurepassIDCards>:

<sup>31</sup> <http://www.dcba.org/?page=courtID>:

շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների (2013 թվականի մայիսի 14-ի թիվ 8 որոշումը, 2015 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 439-Օ որոշումը), թույլատրելի են միայն դրանց համապատասխանության և համաչափության պայմանով: Դրանք կարող են արդարացվել միայն ՌԴ Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանադրական կարգի հիմունքների, բարոյականության, առողջության, այլոց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակների, և երկրի պաշտպանության ու անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ<sup>32</sup>:

Ըստ ՌԴ Սահմանադրական դատարանի՝ իրավունքի գերակայության և իրավական հավասարության հիմնարար սկզբունքների ուժով կասկածյալների և մեղադրյալների կողմից փաստաբանի (պաշտպանի) որակյալ իրավաբանական օգնություն ստանալու ընթացքում ձևավորվող հարաբերությունների կոնֆիդենցիալ (խորհրդապահական) բնույթին պետության միջամտությունը չպետք է լինի կամայական և խախտի հավասարակշռությունը հանրության շահերի պահանջների և անձի հիմնական իրավունքների պաշտպանության սահմանադրական պայմանների միջև: Դա ենթադրում է ողջամիտ համաչափություն գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև, որպեսզի ապահովվի սահմանադրությամբ պաշտպանվող արժեքների հավասարակշռություն<sup>33</sup>:

*Այսպիսով, արտասահմանյան երկրների օրենսդրական փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ նախ, այդ երկրներում պետական համապատասխան հաստատություն մուտք գործելիս զննության և խուզարկության ընթացակարգերում նախատեսված են հատուկ կարգավորումներ, եթե խոսքը վերաբերում է իրավաբանական օգնություն ցույց տվող անձանց: Գլխավոր սկզբունքն այն է, որ փաստաբանի մասնագիտական աշխատանքը ենթակա է հատուկ երաշխավորման և չի կարող հավասարապես նույն վերաբերմունքի արժանանալ, ինչ ցանկացած այլ դեպքում: Բացի այդ, ուսումնասիրված երկրների մեծամասնությունն օրենսդրորեն ամրագրում է տեխնիկական միջոցներով զննության կամ խուզարկության հատուկ պահանջ և համապատասխան ընթացակարգեր: Կարևոր երաշխիքային նշանակություն ունի նաև այն երկրների*

<sup>32</sup><http://doc.ksrf.ru/decision/KSRFDecision48708.pdf>

<sup>33</sup><http://doc.ksrf.ru/decision/KSRFDecision48708.pdf>

*մոտեցումը, որտեղ ամրագրվում է տեխնիկական սարքերով ազդանշանի դեպքում արգելված իրերն ինքնուրույն հեռացնելու՝ փաստաբանի իրավունքը: Կարևոր է այն երկրների փորձը, որտեղ առկա են պետական պահպանվող հաստատություն մուտք գործելիս ստուգողական գործողությունների իրականացման հրապարակված մեթոդական ուղեցույցներ. դրանք ապահովում են որոշակիություն իրավակիրառողների և հանրության համար:*

### **3. Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումներն ու իրավակիրառ պրակտիկան**

Փաստաբանական գործունեությունը, հիմնված լինելով անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ՝ իբրև անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի անհրաժեշտ նախապայման:

Պետական համապատասխան հաստատություններում մասնագիտական աշխատանք կատարող փաստաբանի գործունեության քննարկվող երաշխիքների վերաբերյալ ամբողջական պատկեր կազմելու նպատակով ուսումնասիրվել են մի կողմից քրեակատարողական հիմնարկ կամ դատարան մուտք գործելիս իրականացվող ստուգողական գործողությունների՝ օրենքի մակարդակում կարգավորվածությունը, մյուս կողմից՝ դրանց իրականացման կանոններն ամրագրող իրավական ակտերում այդ ընթացակարգերի սահմանման շրջանակները:

Իբրև ուսումնասիրության առանձին և թերևս առանցքային ուղղություն՝ համակողմանի դիտարկվել են փաստաբանի նկատմամբ այդպիսի միջոցառումների իրականացման իրավաչափ սահմանները՝ փաստաբանի մատչելիության և փաստաբանական գաղտնիքի հիմնարար սկզբունքների ապահովման համատեքստում: Ուսումնասիրվել են արգելված իրերին առնչվող կարգավորումներն ու պրակտիկան: Քննարկման առարկա է դարձել նաև փաստաբանների նկատմամբ այդ գործողությունների կիրառման տարբերակված մոտեցման իրավաչափությունը՝ քրեական գործերով մեղադրանքի կողմը ներկայացնող դատախազների համեմատությամբ՝ խտրականության ընդհանուր արգելքի շրջանակներում:

Ընդ որում, առանձին ուսումնասիրվել են դատարաններին, ինչպես նաև ազատությունից զրկման վայրերից քրեակատարողական հիմնարկներին առնչվող կարգավորումները, իսկ հետո իրականացվել է դրանց մանրամասն վերլուծություն:

Այսպես, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝ «Ձերբակալվածներին պահելու վայր և

կալանավորվածներին պահելու վայր մուտք և ելք գործող անձը, ինչպես նաև նրա իրերը ձեռքակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերի կողմից կարող են ենթարկվել զննության:»:

Նույն օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Ձեռքակալված և կալանավորված անձինք ենթարկվում են անձնական խուզարկության՝ նույն սեռին պատկանող անձանց կողմից, մատնադրոշման և լուսանկարահանման: Խուզարկությունը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: (...)»:

Նմանատիպ կարգավորում է պարունակում նաև ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, որի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պատիժը կատարող հիմնարկ մուտք և ելք գործող անձը, ինչպես նաև նրա իրերը պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի կողմից կարող են ենթարկվել զննության:

Մեջբերված կարգավորումներից բխում է, որ օրենսդիրն ամրագրել է քրեակատարողական հիմնարկներ մուտք գործելիս անձին զննության ենթարկելու հնարավորություն: Միննույն ժամանակ, թե՛ Օրենքով, թե՛ Քրեակատարողական օրենսգրքով ամրագրված է կալանավորված, ինչպես նաև պատիժ կրող անձանց նկատմամբ կիրառելի այլ ընթացակարգ ևս՝ խուզարկություն:

Նշված դրույթների ուսումնասիրությունը վկայում է, որ երկու տարբեր եզրույթների գործածմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել տարանջատելու դրանց իրավական բովանդակությունները՝ դրանք կիրառելի դարձնելով սուբյեկտների տարբեր շրջանակի նկատմամբ: Դրա հետ միասին, օրենքի մակարդակով «զննության» և «խուզարկության» բովանդակային ընդգրկման շրջանակները, այսինքն՝ այդ ընթացակարգերի բովանդակությունը կազմող՝ անձի իրավունքներին միջամտող կոնկրետ գործողություններն ամրագրված չեն: Դրանք որոշակի մանրամասնեցում են ստացել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշմամբ<sup>34</sup>: Այդ որոշման 88-րդ կետի համաձայն՝

---

<sup>34</sup> Այսուհետ՝ Կանոնակարգ:

«Մույն կանոնակարգով արգելված իրերի, առարկաների և սննդամթերքի (N 2 ձև) ներթափանցումը, ինչպես նաև քրեական գործի քննությանը խոչընդոտելը կամ նոր հանցագործություն կատարելը կանխարգելելու նպատակով կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի կողմից իրականացվում են (...) կալանավորվածներին պահելու վայր և ուղղիչ հիմնարկ մուտք ու ելք ունեցող այլ անձանց **անձնական խուզարկություններ** (...):»:

Կանոնակարգի 97-րդ կետն ամրագրում է, որ.

«Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի տարածք մուտք գործող ու այդ տարածքից ելք ունեցող անձի իրերի **զննումն** իրականացվում է պարտադիր կարգով, իսկ հագուստը ենթակա է զննության, եթե բավարար հիմքեր կան կասկածելու, որ վերջինիս կողմից փորձ է արվում արգելված իր կամ առարկա անցկացնելու (...):»:

Վերը նշված դրույթների բովանդակությունից պարզ է դառնում, որ ի տարբերություն օրենքի կարգավորումների, Կանոնակարգով քրեակատարողական հիմնարկ մուտք գործող անձանց նկատմամբ կարող է իրականացվել թե՛ զննություն, թե՛ խուզարկություն: Ընդ որում, չկա որևէ տարբերակում զննության կամ խուզարկության ենթակա անձանց շրջանակի հարցում: Սա արդեն վկայում է Կանոնակարգի՝ օրենքի պահանջներից շեղվող իրավակարգավորումների մասին: Այդուհանդերձ, քննարկվող բուն խնդիրը այդ ընթացակարգերի՝ իրավունքի սահմանափակման տեսանկյունից տարբերակվածությունն է: **Այս առումով ևս, Կանոնակարգի կարգավորումները չեն ապահովում բավարար որոշակիություն՝ այդ ընթացակարգերի բովանդակությունը բացահայտելի էությամբ կրկնվող ձևակերպումներ ամրագրելով:**

Մասնավորապես, Կանոնակարգի՝ անձնական խուզարկության կարգը նախատեսող 90-րդ կետով ամրագրվում են հետևյալ հաջորդական գործողություններն ու դրանց իրականացման պայմանները՝

- այլ անձինք անձնական խուզարկության ենթարկվում են կալանավորված անձի կամ դատապարտյալի հետ հանդիպելուց առաջ և հետո.

- նրանցից պահանջվում է ցույց տալ հագին եղած հագուստի գրպանների, պայուսակների պարունակությունը և իրենց մոտ գտնվող իրերը:

Անհրաժեշտության դեպքում քրեակատարողական ծառայողի պահանջով տրամադրվում է հագին եղած հագուստը՝ այն զննելու նպատակով՝ առանց նսեմացնելու կամ նվաստացնելու խուզարկման ենթարկվողի անձը.

- անձնական խուզարկությունից առաջ համապատասխան քրեակատարողական ծառայողի կողմից առաջարկվում է ինքնակամ ներկայացնել խուզարկվողի մոտ գտնվող իրերը և առարկաները, իսկ արգելված իրերի կամ առարկաների առկայության դեպքում՝ դրանք ինքնակամ հանձնել:

Դրան գուգահեռ, Կանոնակարգն ամրագրում է նաև զննության գործընթացի իրականացման գրեթե նույնական պահանջներ: Այսպես, Կանոնակարգի 97-րդ կետի համաձայն՝

«Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի տարածք մուտք գործող ու այդ տարածքից ելք ունեցող անձի իրերի զննումն իրականացվում է պարտադիր կարգով, իսկ հագուստը ենթակա է զննության, եթե բավարար հիմքեր կան կասկածելու, որ վերջինիս կողմից փորձ է արվում արգելված իր կամ առարկա անցկացնելու (...):»:

98-րդ կետն ամրագրում է, որ «Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի տարածք մուտք գործող ու այդ տարածքից ելք ունեցող անձի իրերի զննումից առաջ անձին ներկայացվում է արգելված իրերի ու առարկաների ցանկը և առաջարկվում՝ դրանց առկայության դեպքում ինքնակամ հանձնել: Զննման ընթացքում առաջարկվում է ցույց տալ պայուսակի, ճամպրուկի, փաթեթի կամ այլ պահոցի պարունակությունը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ զննման համար տրամադրել նաև հագուստը:»:

Ինչպես անձնական խուզարկությունից, այնպես էլ զննությունից առաջ անձանց առաջարկվում է արգելված իրերի կամ առարկաների առկայության դեպքում՝ դրանք ինքնակամ հանձնել: Տարբերությունն էլ ընդամենն այն է, որ խուզարկության ընթացքում **պահանջվում է**, իսկ զննության դեպքում՝ **առաջարկվում** ցույց տալ պայուսակի, հագուստի գրպանների, այլ պահոցի պարունակությունը:

**Այսպիսի կարգավորումների պայմաններում առաջնային է դառնում Կանոնակարգի տեսանկյունից հենց «զննության» և «խուզարկության»**

ընթացակարգերի տարանջատումն այն առումով, որ նախ այդ փաստաթղթով ոչ միայն չեն հստակեցվում այդ ընթացակարգերի բովանդակությունները, այլև դրանք չեն բխում օրենքի կարգավորումներից՝ ըստ այդմ իրավակիրառ պրակտիկայում անխուսափելիորեն առաջացնելով խնդիրներ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դիտարկումներն ու հասցեագրված բողոքները վկայում են, որ խնդիրներ են առաջանում նաև դատարաններում՝ կապված դատարանի շենք մուտք գործելիս դատական կարգադրիչների կողմից իրականացվող ստուգողական գործողությունների հետ: Այս առումով ևս, սույն ուսումնասիրության շրջանակներում քննարկման առարկա են դարձել օրենսդրական կարգավորումներն ու իրավակիրառ պրակտիկան:

ՀՀ դատական օրենսգիրքը, ի տարբերություն քրեակատարողական օրենսդրության, նախատեսում է միայն մեկ՝ զննության իրավական ընթացակարգ: Այսպես, Օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Դատական կարգադրիչն իր գործառույթներն իրականացնելու նպատակով իրավունք ունի զննության ենթարկելու դատարան կամ դատական նիստերի դահլիճ մուտք գործող անձանց և նրանց իրերը»:

Օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական կարգադրիչի՝ իր իրավասության սահմաններում առաջադրած պահանջները պարտադիր են կատարման համար: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նույն օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքներն իրականացնելիս դատական կարգադրիչի պահանջներին չենթարկվելու դեպքում դատական կարգադրիչը կարող է համապատասխանաբար արգելել անձի մուտքը դատարանի շենք (...):»:

Զննության իրականացման կարգը մանրամասնեցում է ստացել ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշումներում: Մասնավորապես, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի՝ 2011թ. հուլիսի 21-ի «Դատական կարգադրիչների կողմից դատարան կամ դատական նիստերի դահլիճ մուտք գործող անձանց և նրանց իրերը զննության ենթարկելու կարգերը հաստատելու մասին» թիվ 04-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝

«1. Կարգադրիչի կողմից պահպանվող տարածք մուտք գործող անձինք և իրերը կարգադրիչի կողմից կարող են ենթարկվել զննության:

2. Զննումից առաջ անձին առաջարկվում է ներկայացնել այն առարկաները, որոնք արգելվում է մտցնել պահպանվող տարածք: Պահպանվող տարածք մուտք գործող անձանց իրերի զննում կատարվում է համապատասխան սեռի կարգադրիչի կողմից:

3. Զննման ընթացքում առաջարկվում է ներկայացնել պայուսակի, ճամպրուկի, փաթեթի կամ այլ պահոցի պարունակությունը:

4. Պահպանվող տարածք մուտք գործող անձանց և իրերի զննման ժամանակ արգելված իրերի, առարկաների առկայության դեպքում առաջարկվում է դրանք թողնել համապատասխան պահոցում՝ տարածքից ելք ունենալիս դրանք հետ վերցնելու պայմանով:

5. Եթե պահպանվող տարածք մուտք գործող անձանց և իրերի զննման ժամանակ հայտնաբերվում են այնպիսի իրեր կամ առարկաներ, որոնք կարող են մարդու կյանքին կամ առողջությանը ակնհայտ վնաս հասցնելու մասին վկայել, կարգադրիչի կողմից վերցվում են, որի մասին կազմվում է արձանագրություն: (...)»:

Այս ընթացակարգերի կիրառման վերաբերյալ ՀՀ դատական դեպարտամենտի պարզաբանումների համաձայն՝ գործնականում դատական կարգադրիչների կողմից զննություն կատարելու հայեցողական իրավունքի օբյեկտիվ հիմքն ապահովելու նպատակով օգտագործվում են նաև հատուկ մետաղաորսիչ սարքեր, որոնք համապատասխան ձայնային ազդանշան են տալիս դատարան կամ դատական նիստերի դահլիճ մուտք գործող անձի մոտ մետաղական իրերի առկայության դեպքում, որի պարագայում դատական կարգադրիչն իրավունք ունի կրկնակի զննելու տվյալ անձին: Ըստ Դատական դեպարտամենտի՝ «...Վերաքննիչ քրեական դատարան մուտք գործելու համար փաստաբանները, ինչպես նաև դատարան մուտք գործող բոլոր անձինք ստուգման են ենթարկվել մետաղաորսիչ սարքով: Մետաղաորսիչ սարքով ստուգման ընթացքում փաստաբանների պայուսակներից ստացվել են մետաղական իրերի առկայության վերաբերյալ ձայնային ազդանշաններ: Ձայնային ազդանշանների պատճառ հանդիսացած առարկաների բնույթը պարզելու համար դատական կարգադրիչների կողմից հիշյալ

անձանց առաջարկվել է բացել պայուսակները՝ դրանք գնության ենթարկելու համար, ինչը փաստաբանները հրաժարվել են կատարել»:

Նշվել է նաև, որ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում բացակայում են այնպիսի տեխնիկական միջոցներ, որոնց առկայության պայմաններում հնարավոր կլինեին գնության ընթացքում մետաղաորսիչ սարքի կիրառման ընթացքում ձայնային ազդանշանի արձակման դեպքում առանց պայուսակները բացելու ստուգել դրանցում մետաղական կամ այլ արգելված իրերի առկայությունը կամ բացակայությունը, այդ իրերի բնույթը: Ուստի, ըստ Դատական դեպարտամենտի՝ տվյալ դեպքում դատական կարգադրիչների գործողությունները պայմանավորված են եղել բացառապես արգելված առարկաները դատական նիստերի դահլիճ տանելը չթույլատրելու հանգամանքով, այլ ոչ թե փաստաբաններին խուզարկության ենթարկելու և նրանց մոտ առկա փաստաբանական գաղտնիք կազմող փաստաթղթերին ծանոթանալու նպատակով:

Ինչպես բխում է նշված իրավական կարգավորումներից, դատարան մուտք գործող անձանց դեպքում ևս առաջարկվում է ներկայացնել պայուսակի կամ որևէ այլ պահոցի պարունակությունը, որից հրաժարման դեպքում անձն ուղղակի հնարավորություն չի ունենա մուտք գործել դատական նիստերի դահլիճ: Ընդ որում, այդ ընթացակարգն ընդհանուր կարգով կիրառելի է դատարան մուտք գործող անձանց, այդ թվում՝ փաստաբանի նկատմամբ:

**Խնդիրն իհարկե առավել զգայուն է դառնում, երբ խոսքը վերաբերում է փաստաբանի գնության կամ խուզարկության իրավաչափությանը: Բանն այն է, որ այս դեպքում առաջնահերթ են դառնում փաստաբանի մասնագիտական աշխատանքի պաշտպանությունն և նրա վստահորդի իրավունքների երաշխիքները:**

Վերը նկարագրված կարգավորումները գործնականում կարող են առաջացնել քրեակատարողական ծառայողի կամ դատական կարգադրիչի պահանջի կամ գործողության իրավաչափության խնդիր: Բանն այն է, որ փաստաբանի գործունեության անխոչընդոտ իրականացումը, այդ թվում՝ իր վստահորդի հետ խորհրդապահական կարգով տեսակցելու հնարավորությունն ուղղակիորեն կապված է անձի արդար դատաքննության իրավունքի հետ: Սրա հետ կապված,

առկա գործնական խնդիրն այն է, որ հրաժարվելով զննության ենթարկվել և իր նկատմամբ իրականացվող ստուգողական գործողությունը մեկնաբանելով խուզարկություն՝ փաստաբանը մուտք չի գործում համապատասխան վայր: Արդյունքում, վստահորդը զրկվում է իր փաստաբանին տեսակցելու հնարավորությունից, որն առաջացնում է անձի պաշտպանության, մասնավորապես՝ փաստաբանի մատչելիության երաշխավորման, փաստաբանի արդյունավետ աշխատանքի և ի վերջո նրա հեղինակության հարց:

Վերը շարադրվածի հետ կապված՝ անհրաժեշտ է հաշվի առնել մի քանի կարևոր հանգամանք՝

1. մարդկային սուբյեկտիվ գործոնից զերծ՝ հայտնաբերման և զննության սարքերի առկայության ապահովումը պետական հիմնարկներում (այդ թվում՝ դատարաններում և քրեակատարողական հիմնարկներում) ուղղված է պետական ծառայողի հայեցողությունը նվազեցնելուն և կամայականության ընկալումը վերացնելուն.

2. զննության տեխնիկական միջոցների բացակայությունը որևէ կերպ չի կարող նվազեցնել փաստաբան-վստահորդ արտոնյալ հաղորդակցության և փաստաբանական գաղտնիքի պաշտպանվածությունը և արդարացնել պետական ծառայողի՝ որպես միակ հնարավոր լուծում դիտարկվող «զննության» կամ «խուզարկության» ենթարկելու պահանջը.

3. իրավախախտումների կանխման, անվտանգության ապահովման կամ այլոց իրավունքների պաշտպանության նկատառումով գործադրվող ստուգողական ցանկացած գործողություն պետք է իրականացվի փաստաբանի և նրա վստահորդի շահերի հետ հավասարակշռման և հիմքերի պատշաճ քննարկման պայմաններում.

4. պրակտիկան վկայում է, որ զննության ենթարկվելուց հրաժարվելու մասին փաստաբանների պատճառաբանությունները դատական կարգադրիչների կողմից որոշումներ կայացնելիս համաչափության տեսանկյունից հաշվի չեն առնվել այն առումով, որ զննության՝ գործողությունների որոշակի շրջանակով չսահմանափակված ընթացակարգից հրաժարումն անկախ ամեն ինչից առաջացրել է խիստ հետևանք. դատական նիստերի դահլիճ մուտքն արգելելը.

5. քննարկվող ընթացակարգերում առանցքային է հենց անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության և արդար դատաքննության իրավունքների երաշխավորումը: Հետևաբար, այն, որ օրինակ, Ղատական դեպարտամենտի պարզաբանմամբ, ղատական կարգադրիչների գործողությունները նպատակուղղված են եղել ապահովելու անվտանգությունը, այսինքն՝ իրավաչափ նպատակ են հետապնդել, անհրաժեշտ, բայց ոչ բավարար գործոն է: Սկզբունքային է, որ այդ իրավաչափ նպատակին ուղղված գործողություններով չստեղծվեն պայմաններ, որոնք կառաջացնեն այդ նպատակից շեղվող, օրինակ, փաստաբանական գաղտնիք կազմող փաստաթղթերին հասանելիության իրական վտանգ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասն ամրագրում է. «Փաստաբանի բնակարանը, տրանսպորտային միջոցը կամ գրասենյակը, ինչպես նաև փաստաբանական կազմակերպության գրասենյակը չեն կարող խուզարկվել փաստաբանական գործունեության հետ առնչվող հանգամանքները պարզելու կապակցությամբ: **Չի թույլատրվում փաստաբանին խուզարկել իր մասնագիտական պարտականություններն անմիջականորեն կատարելիս:**»:

Օրենսդիրը նման կարգավորումն ամրագրել է՝ հենց հաշվի առնելով արդար դատաքննության իրավունքի իրականացման համար անհրաժեշտ երաշխիքները, մասնավորապես, փաստաբանական գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը: Փաստաբանին խուզարկելու արգելքն ուղղված է վստահորդի, այդ թվում՝ պաշտպանյալի իրավունքների իրականացման ապահովմանը և անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր այն դեպքերում, երբ որևէ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի գործողությունների արդյունքում այն կարող է վտանգվել:

Մինչդեռ, թե՛ Կանոնակարգը, թե՛ Ղատաբանների նախագահների խորհրդի որոշումը մասնագիտական աշխատանք կատարող փաստաբանի դեպքում զննության իրականացման կարգից բացառություններ կամ հատուկ կարգավորումներ չեն պարունակում: Ստացվում է, որ օրինակ, փաստաբանին կարող է առաջարկվել ցույց տալ իր պայուսակի պարունակությունը՝ չնայած նրան, որ այդպիսով կարող է ստեղծվել փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակման վտանգ: Ընդ որում, փաստաբանին այսպիսի «առաջարկի» ներկայացման ոչ

իմպերատիվ ձևակերպումն ամեննին խնդրի լուծում չի կարող լինել՝ այն հիմնավորմամբ, որ դրան չհետևելու իրավական հետևանքը նույնն է՝ համապատասխան վայր մուտք գործելն արգելելը: Դրանից բացի, խնդրո առարկա ընթացակարգերը կարգավորող իրավական ակտերում չի արտացոլվել նաև իր մասնագիտական պարտականություններն անմիջականորեն կատարելիս փաստաբանին խուզարկելու օրենքի արգելքը, ինչի պատճառով այս երաշխիքը կարող է և գործնականում չապահովվել:

Փաստաբանի մասնագիտական աշխատանքը քրեակատարողական հիմնարկում, դատարանում կամ պահպանվող պետական այլ հաստատությունում ենթակա է հատուկ երաշխավորման: Իրավաբանական օգնությանը, փաստաբանական գաղտնիքին առնչվող փաստաթղթերը կամ տեղեկատվական կրիչներն անձեռնմխելի են: Դրանք չեն կարող հասանելի լինել նաև, օրինակ, քրեակատարողական ծառայողին կամ դատական կարգադրիչին: Փաստաբանը պաշտպանված է նաև խուզարկությունից իր մասնագիտական պարտականություններն անմիջականորեն կատարելիս: Այս երաշխիքներն ինքնանպատակ չեն. դրանք կոչված են ապահովելու փաստաբանի անխոչընդոտ աշխատանքը և իրավաբանական օգնության կարիք ունեցող անձի իրավունքների լիարժեք իրացումը:

Միննույն ժամանակ, փաստաբանի գործունեության անխոչընդոտ իրականացման համար կարևորագույն այս պահանջի իրավաչափ շրջանակները կանխորոշվում են իր մասնագիտական գործառույթներն իրականացնելիս փաստաբանի բարեխղճության և օրինապահության սկզբունքներով: Այսպես, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն ամրագրում է, որ փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:

Համաձայն Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 6.2.1-րդ կետի՝ փաստաբանը պարտավոր է ձերբակալվածներին պահելու վայրերում,

կալանավորվածներին պահելու վայրերում և ուղղիչ հիմնարկներում պահպանել սահմանված կարգը և իր վստահորդին կամ այլ անձի չփոխանցել արգելված իրեր:

Մի կողմից՝ փաստաբանական գործունեության առանցքային նշանակությունն արդարադատության իրականացման գործընթացում, մյուս կողմից՝ բարեխիղճ և օրենքին համապատասխան գործելու փաստաբանի պարտականությունն ու բարձր պատասխանատվությունը, առաջացնում են փաստաբանի բարեխիղճության կանխավարկածով առաջնորդվելու պետության իրավասու ներկայացուցիչների, տվյալ դեպքում՝ քրեակատարողական ծառայողների և դատական կարգադրիչների պարտականությունը:

Բացի այդ, փաստաբանի նկատմամբ վստահությունը կարևոր է հասարակության կողմից փաստաբանի իրավապաշտպան դերի ու նշանակության ճիշտ ընկալման տեսանկյունից:

Այս պահանջների գործնական ապահովման և կանխատեսելի պրակտիկայի ձևավորման անհրաժեշտության մասին է վկայում մի կարևոր հանգամանք ևս: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից քննության առնված գրեթե բոլոր իրավիճակներում փաստաբանները կանգնեցվում էին այնպիսի երկրնորանքի առջև, երբ վերջիններիս հնարավոր վարքագծի ցանկացած տարբերակ կարող էր հանգեցնել իրենց պաշտպանյալների իրավունքների ոչ համաչափ սահմանափակման: Այլ կերպ ասած, քրեակատարողական ծառայողի կամ դատական կարգադրիչի՝ փաստաբանին ուղղված պահանջը կամ առաջարկը ստուգողական այս կամ այն գործողությունն անցնելու վերաբերյալ, նման պահանջի հիմքում ընկած բավարար փաստերի կամ տեղեկության կամ օրենքով պաշտպանվող իրավաչափ շահերի պաշտպանության անհրաժեշտության բացակայության պայմաններում, կարող է ստեղծել «փակուղային» իրավիճակ այն առումով, որ փաստաբանը ստիպված է հակակշռելու մի կողմից՝ իր վստահորդի՝ փաստաբանի մատչելիության և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, մյուս կողմից՝ փաստաբանական գաղտնիքի պաշտպանվածությունը: Ավելին, առանձին դեպքերում կարող ենք գործ ունենալ նաև արդար դատաքննության մյուս երաշխիքների, ինչպես նաև անձնական ազատության իրավունքի հետ:

Ասվածը հաշվի առնելով՝ հարցի լուծումը պետք է տրվի ստուգողական գործողությունը գնահատելով ոչ թե միայն իրավաչափության, այլ նաև այդպիսի ստուգողական գործողության նախաձեռնման սկզբնական փուլում՝ օրենքով պաշտպանվող իրավաչափ շահերի պաշտպանության տեսանկյունից դրա հիմքերի որոշակիության և բավարարության առումով:

Այլ կերպ, առկա է տարանջատման խնդիր մի կողմից՝ քննարկվող ընթացակարգերի՝ իբրև սովյալ պետական կառույց մուտք գործելու պարտադիր պայման դիտարկվող գործընթացի, մյուս կողմից՝ իրավախախտման կամ անվտանգությանը սպառնացող վտանգի, այլոց իրավունքների պաշտպանության վերաբերյալ կոնկրետ հիմքերի առկայության դեպքում իրավունքին միջամտությամբ ուղեկցվող գործողության միջև:

Առաջին դեպքում, երբ փաստաբանի նկատմամբ ստուգողական գործողությունն իրականացվում է՝ պայմանավորված քրեակատարողական հիմնարկ կամ դատարան նրա մուտքով և ելքով, այն պետք է պարունակի նրա մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտության և պետական մարմնի ներկայացուցչի հայեցողության նվազագույն ռիսկ: Եթե իրականացվող գնությունը պայմանավորված է ենթադրյալ իրավախախտումը կանխելու, կոնկրետ վայրի անվտանգությունը կամ այլ անձանց իրավունքներն ապահովելու անհրաժեշտությամբ, ապա առաջ է գալիս իրավական այն հիմքերի որոշակիացված սահմանման հարց, որոնք կպայմանավորեն այդպիսի ստուգողական գործողություն իրականացնելու՝ պետական մարմնի ներկայացուցչի իրավաչափ որոշումը:

Ասվածը գործնական կարևորություն ունի նաև այն բանի հաշվառմամբ, որ ինչպես բարձրաձայնել են նաև առանձին փաստաբաններ ու հասարակական կազմակերպություններ, այդպիսի ստուգողական միջոցառումները գործնականում ունեն ոչ իրավաչափ ընտրողականություն: Սրա հետ կապված, «Իրավունքների պաշտպանությունն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունն, օրինակ, նշել է, որ «դատարան մուտք գործելու համար փաստաբանների գնությունը չի հանդիսանում միասնական պրակտիկայի դրսևորում, այն երբևէ նախկինում չի իրականացվել, իսկ դատական գործերի ընտրությունը, որոնց մասնակցության համար իրականացվում է անվտանգության ստուգում, կոնկրետ,

կանխատեսելի և արդարացի ընտրության չափանիշների հիման վրա չի իրականացվել»:

Բարձրացված խնդրին ուղղակիորեն առնչվում է քրեակատարողական հիմնարկում կամ դատարանում **արգելված իրերի ցանկի՝** ներպետական օրենսդրությամբ ամրագրումը: Այս հարցն անհրաժեշտ է դիտարկել մի կողմից այդպիսի ցանկի առկայության անհրաժեշտության, մյուս կողմից՝ այն սկզբունքի որոշակիացման տեսանկյունից, որով կանխորոշվում է արգելված իրերի շրջանակը:

Նախ, հարկ է անդրադարձ կատարել Կանոնակարգով նախատեսված՝ արգելված առարկաների ցանկին, որն ըստ էության այն նյութական իրավական հիմքն է, որը կանխորոշում է քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձանց, ինչպես նաև հիմնարկ մուտք ու ելք ունեցող անձանց զննության (խուզարկության) ենթարկելու անհրաժեշտությունը:

Այսպես, Կանոնակարգի՝ արգելված իրերի ցանկն ամրագրված է իբրև «Իրերի, առարկաների և սննդամթերքի ցանկ, որոնք արգելվում են ունենալ կալանավորված անձանց և դատապարտյալներին իրենց մոտ, ստանալ կամ ձեռք բերել հանձնուքներով, ծանրոցներով և փաթեթներով»:

Հետևաբար, ստացվում է, որ այդպիսի ցանկի ամրագրումը նպատակ ունի կանխելու դրանց առկայությունը հենց դատապարտյալի կամ կալանավորվածի մոտ՝ դրանով իսկ այդ արգելքը տարածելով ազատությունից զրկված անձին տեսակցելու նպատակով քրեակատարողական հիմնարկ մուտք գործող անձանց նկատմամբ: Մինչդեռ, օրինակ, Կանոնակարգը չի պարունակում առանձնահատուկ կարգավորումներ այն դեպքերում, երբ անձին տեսակցություն իրականացվում է վերջինիս իրավաբանական օգնության իրավունքի ապահովման նպատակով:

Օրենսդրական կարգավորվածության որոշակիության խնդիրն առկա է նաև դատարանների պարագայում՝ հատկապես այն բանի հաշվառմամբ, որ բացակայում է դատարանում արգելված առարկաների օրենսդրական ամրագրում: Մա իր հերթին պայմանավորում է դատական կարգադրիչի հայեցողությունը՝ որոշելու, թե արդյոք «դատարանում գտնվող անձանց անվտանգությունը» կամ «հասարակական կարգի պահպանությունը» պահանջում են խնդրո առարկա ստուգողական գործողությունների իրականացումը: Դատական նիստերի դահլիճ արգելված իրերի

ցանկի հստակ ամրագրման բացակայությունը պայմանավորում է նաև գործնականում ոչ միասնական մոտեցումն այս հարցում: Օրինակ, փաստաբաններին զննելու խնդրի հետ միասին բարձրացվել էր նաև փաստաբանին որոշակի տարայով ջուր տեղափոխելն արգելելու հետ կապված խնդիրը (կոնկրետ իրավիճակում այն դատարան տանելն արգելելը չէր կարող ընդունելի լինել, քանի որ բերվող պատճառաբանությունը չի ունեցել օբյեկտիվ հիմքեր):

Վերը շարադրվածի հետ կապված, կարևոր է, որ նախ հստակեցվի այդ արգելված առարկաների շրջանակը կանխորոշող օբյեկտիվ հիմքը՝ որպես այդպիսին դիտարկելով այդ առարկաների ներթափանցմամբ արդարադատության իրականացմանը խոչընդոտելու, անվտանգությանը կամ սահմանված կարգին կամ այլոց իրավունքներին սպառնացող վտանգը: Մինչդեռ, դատական նիստերի դահլիճ ներթափանցումն արգելված առարկաների՝ օրենսդրական կարգավորման բացակայությունը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակների, երբ դատական կարգադրիչի կողմից արգելվում է որևէ առարկա՝ փաստաբանական գործունեության հետ դրա ուղղակի առնչություն չունենալու պատճառաբանությամբ: Ստացվում է, որ պրակտիկան կարող է առաջնորդվել մարդու ազատ գործելու սահմանադրական իրավունքին հակառակ կանխավարկածով՝ թույլատրելի սահմանները կանխորոշելով այդ իրավունքի իրացման միայն որոշակի նպատակների առկայությամբ:

Հետաքրքրական է, որ արտասահմանյան երկրների օրենսդրությամբ ամրագրված է դատարան ներկայանալու համար արգելված իրերի սահմանման այն տրամաբանությունը, որ այդ արգելքն առաջնահերթ ուղղված է դատարանի և այնտեղ գտնվող անձանց անվտանգության ապահովմանը: Այսպես, Ամերիկայի Միացյալ Նահանգների Ռոդ Այլենդ նահանգի «Դատարանի կանոնները» ամրագրում են, որ դատարան արգելված առարկաներ են՝

- ցանկացած տեսակի զենքը,
- կտրող գործիքներ, ներառյալ դանակ, մկրատ կամ կտրող ծայրով այլ առարկա,
- սուր առարկաներ, այդ թվում՝ շյուղեր,
- ակրոզոլային հեղուկներ կամ տարաներ,

• տեսանկարահանող կամ ձայնագրող սարքավորումներ, այդ թվում՝ տեսախցիկներ, տեսաձայնագրիչներ<sup>35</sup>:

Ավստրալիայում Միդնեյի շրջանային դատարանի կանոնները սահմանում են, որ դատարան մուտք գործելիս կարող են անձից առգրավվել հետևյալ խումբ առարկաները՝

• ցանկացած առարկա, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն սահմանափակ շրջանառության իր կամ հարձակողական գործիք է (offensive implement),

• ցանկացած առարկա, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն կարող է թաքցնել սահմանափակ շրջանառության իրը կամ հարձակողական գործիքը,

• ակոհոլ, եթե առկա չէ Մագիստրոսի, Դատավորի կամ Քարտուղարի թույլտվությունը,

• ցանկացած այլ առարկա, որն անվտանգության աշխատակցի պատճառաբանված ենթադրությամբ այդ կարգավորումների շրջանակների մեջ ընդգրկվում է<sup>36</sup>:

Բացի վերը նշվածից՝ արգելվում է դատարան մուտք գործել հետևյալ առարկաներով՝ մկրատ, սպորտային ձողեր, դակիչներ կամ պտուտակներ, որոնք կարող են գործածվել իբրև զենք, անձնական փոխադրամիջոցներ, հեղուկի տարաներ, ապակե շշով ջուր կամ ցանկացած ապակե տարա:

Միացյալ Թագավորությունում Դատարանների և տրիբունալների ծառայությունը, որը պատասխանատու է քրեական, քաղաքացիական և ընտանեկան գործերով դատարանների աշխատանքի կազմակերպման հարցերով, հրապարակել է այցելուների համար խորհրդատվություն, թե ինչն է արգելված դատարանի կամ տրիբունալի շենքում:

Մասնավորապես, չի թույլատրվում՝

• ցանկացած տեսակի դանակ կամ սրեցրած առարկա, օրինակ՝ դյուրակիր, արհեստավորական դանակ կամ այլ սեղանի պարագաներ,

• սուր առարկաներ, օրինակ՝ մկրատ, ներարկիչ (բացի բժշկական նպատակների համար նախատեսված), արհեստավորական ասեղներ,

<sup>35</sup> [https://www.courts.ri.gov/PublicResources/PDF/Court\\_House\\_Rules.pdf](https://www.courts.ri.gov/PublicResources/PDF/Court_House_Rules.pdf)

<sup>36</sup> <https://downingcentre-court.com.au/blog/what-items-cant-be-taken-into-downing-centre-court/>

- նմանակման զենք (replica gun), օրինակ՝ զենքին նմանվող լուսավորիչ կամ արդուզարդ, խաղալիք զենք,

- աշխատանքային գործիքներ, օրինակ՝ մուրճ, պտուտակ, մեխ,

- ալկոհոլ:

Դատարանի շենքում արգելվում է նաև տեսանկարահանումն ու ձայնագրումը հասարակության անդամների կողմից<sup>37</sup>:

Միջազգային իրավական մոտեցումների հաշվառմամբ՝ կարծում ենք, որ ներպետական օրենսդրական կարգավորումներն այս առումով ևս պետք է հստակեցվեն՝ նախատեսելով արգելված առարկաների ցանկն այն տրամաբանությամբ, որ այդ արգելքը սահմանվի, օրինակ, անվտանգության կամ այլոց իրավունքների ապահովման նկատառումներով և հաշվի առնի մասնավոր շահի ապահովման, այն է՝ անձի իրավունքների, այդ թվում՝ պատշաճ իրավաբանական օգնության իրավունքի ապահովման, ինչպես նաև փաստաբանի մասնագիտական աշխատանքի պահանջները:

Քրեակատարողական հիմնարկ կամ դատարան մուտք գործելիս փաստաբանների զննության հարցն անհրաժեշտ է դիտարկել նաև օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելման սահմանադրական սկզբունքների համատեքստում:

Բանն այն է, որ ինչպես Մարդու իրավունքների պաշտպանին դիմած փաստաբանների կողմից, այնպես էլ հրապարակային աղբյուրներում նշվել է, որ քրեակատարողական հիմնարկ և դատարան մուտքի և ելքի ժամանակ զննության իրականացման հարցում առկա է տարբերակված՝ խտրական մոտեցում: Մասնավորապես, փաստաբանների պնդմամբ՝ զննության ընթացակարգը գործնականում չի տարածվում քրեակատարողական հիմնարկ և դատարան մուտք գործող անձանց որոշակի խմբի, օրինակ՝ դատախազների վրա:

Սկզբունքային է օրենքի միատեսակ կիրառությունը յուրաքանչյուրի համար, և տարբերակված մոտեցումը թույլատրելի է, եթե այն օրյեկտիվ է և հետապնդում է իրավաչափ նպատակ: Այսպես, Սահմանադրական դատարանը 2010 թվականի մայիսի 4-ի ՄԴՈ-881 որոշմամբ նշել է, որ **խտրականության արգելման սկզբունքի**

<sup>37</sup> <https://www.gov.uk/government/news/security-in-our-court-and-tribunal-buildings>

**շրջանակներում թույլատրելի է համարվում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում:** Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Դատարանը նշել է, որ խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից»:

Ավելին, Սահմանադրական դատարանը 2011 թվականի հունիսի 7-ի թիվ ՍԴՈ-967 որոշման մեջ արտահայտել է դիրքորոշում, համաձայն որի՝ ենթադրյալ խտրականության դեպքում առկա պետք է լինի մի իրավիճակ, երբ տվյալ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում նույն իրավիճակում գտնվող այլ սուբյեկտի համեմատությամբ, ում նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ է:

Խտրականության և իրավական որոշակիության հարաբերակցության առումով հատկանշական է ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թվականի հունվարի 29-ի ՍԴՈ-732 որոշումը, համաձայն որի. «Պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները:»

Կարևոր է ընդգծել, որ քննարկվող իրավիճակում չարդարացված խտրական մոտեցման բացառումը խիստ կարևոր է թե՛ անձի հավասար վերաբերմունքի իրավունքի ապահովման, թե՛ արդարադատության պատշաճ իրականացման նկատմամբ դրա բացասական ազդեցությունը չեզոքացնելու առումով:

Բանն այն է, որ այդպիսի խտրականության բացասական հետևանքների վերջնական կրողը զննությունից հրաժարվելու պատճառով քրեակատարողական հիմնարկ կամ դատական նիստերի դահլիճ մուտք չգործած փաստաբանի վստահորդն է. անձ, ում արդար դատաքննության և պատշաճ իրավաբանական

**օգնություն ստանալու իրավունքները երաշխավորված են Սահմանադրությամբ:**  
Ավելին, այդպիսի խտրական մոտեցումը գործնականում հանգեցնում է մի իրավիճակի, երբ թերևս միայն պաշտպանության կողմի համար պարտադիր այդ ընթացակարգն անցնելուց փաստաբանի հրաժարվելու արդյունքում դատական նիստին ներկայանում է մեղադրողը: Արդյունքում, կարող են վտանգվել կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքները:

Հետևաբար, իրավակիրառ պրակտիկան այս առումով ևս պետք է միասնականացվի՝ բացառելով խտրական վերաբերմունքի դրսևորում, հատկապես այնպիսին, որն ուղղված է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունը խախտելուն:

#### 4. Եզրահանգումներ և առաջարկություններ

Սույն իրավական վերլուծության արդյունքում ներկայացվում են հետևյալ եզրահանգումներն ու առաջարկությունները.

- Փաստաբանի մասնագիտական աշխատանքն արդարադատության իրականացման գործընթացի անբաժան մասն է և ենթակա է հատուկ երաշխավորման:

- Փաստաբանի հանրային հեղինակությունը նրա վստահորդի իրավունքների արդյունավետ պաշտպանության կարևոր երաշխիք է և երկրում իրավապաշտպան աշխատանքի զարգացման անհրաժեշտ գրավականներից:

- Օրենքին համապատասխան և բարեխիղճ գործելու փաստաբանի բարձր պատասխանատվությունն ու կոչումը պայմանավորում են պետության ցանկացած ներկայացուցչի, այդ թվում՝ քրեակատարողական ծառայողի և դատական կարգադրիչի պարտականությունն առաջնորդվելու փաստաբանի օրինավորության, նրա բարեխղճության ու ազնվության կանխավարկածով:

- Անհրաժեշտ է իրականացնել «զննություն» և «խուզարկություն» հասկացությունների հստակ տարանջատում՝ բացահայտելով դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը կազմող գործողությունների շրջանակը՝ հաշվի առնելով կոնկրետ ոլորտում դրա նշանակության իրավական առանձնահատկությունները: Որպես առաջնահերթ լուծում՝ դատարանների դեպքում դա պետք է անել դատական իշխանության մարմնի հատուկ ակտով, իսկ քրեակատարողական հիմնարկների դեպքում՝ հստակեցնելով Կանոնակարգի դրույթները: Որպես հիմնարար լուծում՝ անհրաժեշտ է քննարկել այնպիսի ակտի ընդունման հարց, որը կսահմանի բոլոր հաստատությունների (օրինակ՝ իրավապահ մարմիններ, հատուկ պահպանվող տարածքներ և այլն) նկատմամբ ստուգողական գործողությունների դեպքում կիրառելի միասնական մոտեցումներ:

- Քննարկվող ընթացակարգերը սահմանող ակտերում պետք է հստակ ամրագրվեն ստուգողական գործողության իրավական ռեժիմները՝ յուրաքանչյուրը համապատասխան հիմքերով և ընթացակարգերով, երբ այդ գործողությունը հանդես է գալիս որպես՝

- կոնկրետ իրավիճակում վերաբերելի փաստերի վրա հիմնված՝ «հիմնավոր կասկածի» առկայությամբ պայմանավորված անհրաժեշտ ստուգողական գործողություն.

- տվյալ պետական մարմին մուտք գործելու պարտադիր պայման, այսինքն՝ ոչ ընտրողական կիրառության սկզբունքով: Օրինակ՝ իրավախախտման կանխման, կոնկրետ պետական մարմնի անվտանգության ապահովման կամ այլոց իրավունքների պաշտպանության նպատակով:

- Ջննդության տեխնիկական միջոցների բացակայությունը որևէ կերպ չի կարող նվազեցնել փաստաբան-վստահորդ արտոնյալ հաղորդակցության և փաստաբանական գաղտնիքի պաշտպանվածությունը:

- Իրավախախտումների կանխման, անվտանգության ապահովման կամ այլոց իրավունքների պաշտպանության նկատառումով գործադրվող ստուգողական ցանկացած գործողություն պետք է իրականացվի փաստաբանի և նրա վստահորդի շահերի հետ հավասարակշռման և հիմքերի պատշաճ առկայության պայմաններում:

- Գործող պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ դատարան մուտքի դեպքում զննության ենթարկվելուց հրաժարվելու մասին փաստաբանների պատճառաբանությունները դատական կարգադրիչների կողմից որոշումներ կայացնելիս համաչափության տեսանկյունից հաշվի չեն առնվել այն առումով, որ զննության՝ գործողությունների որոշակի շրջանակով չսահմանափակված ընթացակարգից հրաժարումն անկախ ամեն ինչից առաջացրել է խիստ հետևանք. դատական նիստերի դահլիճ մուտքն արգելելը:

- Պետք է նախատեսել առանձին կարգավորումներ մասնագիտական աշխատանք կատարող անձանց նկատմամբ ստուգողական գործողության, իսկ կոնկրետ դեպքում՝ փաստաբանի նկատմամբ զննության հիմքերի ու իրավաչափ շրջանակների վերաբերյալ՝ բացառելով մյուս սուբյեկտների (օրինակ՝ դատախազների) համեմատությամբ խտրականության որևէ դրսևորում: Դրանցում պետք է պատշաճ արտացոլել մասնագիտական պարտականություններն անմիջականորեն կատարելիս փաստաբանին խուզարկելու անթույլատրելիության օրենսդրական արգելքը:

- Սկզբունքային է, որ իրավաչափ նպատակին ուղղված գործողություններով չստեղծվեն պայմաններ, որոնք կառաջացնեն այդ նպատակից շեղվող, օրինակ, փաստաբանական գաղտնիք կազմող փաստաթղթերին հասանելիության վտանգ:

- Անհրաժեշտ է ամրագրել իրավական կանոն այն մասին, որ փաստաբանը, ելնելով փաստաբանական գաղտնիքի պաշտպանության պահանջից, հնարավորություն ունենա սեփական գործողություններով՝ առանց քրեակատարողական ծառայողի կամ դատական կարգադրիչի միջամտության, հեռացնելու իր մուտքը ենթադրաբար խոչընդոտող առարկաները: Դրանք կարող են ի պահ հանձնվել նաև պահպանվող հաստատությունում:

- Անհրաժեշտ է անհետաձգելիորեն հստակեցնել արգելված առարկաների շրջանակը կանխորոշող օբյեկտիվ հիմքը: Դրանից հետո, արգելված առարկաների ցանկը պետք է նախատեսվի այն տրամաբանությամբ, որ այդ արգելքը սահմանվի իրավախախտումների կանխման, անվտանգության կամ այլոց իրավունքների ապահովման նկատառումով: Այստեղ, պետք է հաշվի առնել նաև անձի պատշաճ իրավաբանական օգնության իրավունքի ապահովման պահանջը՝ ընդհանուր արգելքից բացառություններ նախատեսելով այն առարկաների դեպքում, որոնք փաստաբանին ողջամտորեն անհրաժեշտ են մասնագիտական պարտականությունների կատարման համար:

- Անհրաժեշտ է մշակել պետական հաստատություն, իսկ կոնկրետ դեպքում՝ քրեակատարողական հիմնարկ կամ դատարան մուտք գործելիս ստուգողական գործողությունների (զննություն կամ խուզարկություն) իրականացման մեթոդական ուղեցույցներ, որոնք կապահովեն որոշակիություն թե՛ իրավակիրառողի, թե՛ քաղաքացու համար:

Իրավական պատշաճ պրակտիկայի ձևավորման նպատակով անհրաժեշտ է՝

- ապահովել դատարաններում և քրեակատարողական հիմնարկներում անհրաժեշտ տեխնիկական սարքավորումների առկայությունը.

- կազմակերպել ստուգողական գործողություն իրականացնող աշխատակիցների պարբերական վերապատրաստումներ՝ համապատասխան մեթոդական ուղեցույցների գործնական կիրառության, նաև տեխնիկական

սարքավորումների գործադրման անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ ձևավորելու նպատակով.

- ապահովել այդ ուղեցույցների հասանելիությունը դատարան կամ քրեակատարողական հիմնարկ այցելողների համար՝ դրանք տարածելով զանգվածային լրատվության միջոցներով և հանրությանը մատչելի այլ եղանակներով, այդ թվում՝ փակցնելով համապատասխան շենք մուտք գործողին տեսանելի վայրերում.

- ստուգողական գործողություններ իրականացնելիս անշեղորեն ապահովել միասնական պրակտիկա համապատասխան հաստատությունում մասնագիտական աշխատանք կատարող բոլոր սուբյեկտների համար (փաստաբան, դատախազ և այլն):